

դեցական ժողով դումարել, պարագայ մը, որ և վեր կհանէ
Ն. Ս. Օժութեան լայն ոտին, հետեւաբար այսպիսի ժողովի մը
Ենթարկուելիք անհրաժեշտ խնդիրներու համար խորհրդակցու-
թիւն մը կատարելու և յիշատակագիր մը պատրաստելու հա-
մար, համագումար ժողով մը հրաւիրուի Պօլսոյ մէջ, եպիսկո-
պոսներէ, քարոզիչ վարդապետներէ, աւագերէցներէ և աթո-
ւականերէ բազկացած: Ազդային ժողովն ալ իր բաղձանքներն
յայտնող գիր մը պատրաստելով պիտի ներկայացնէ, բայց կը-
նականներուն ներկայացնելիք գիրը պիտի վերաբերի զուտ
եկեղեց, կանոնական և ծխուական խնդիրներու, առանց ինդիք
յուղելու դաւանութեան վրայ, որ անվիճելի է, ինչպէս Ս.
Հայրապետն ալ կըու:

Կրօնական ժողովը մասնաւորապէս պէտք կդգայ ամուս-
նական ճիւղահամարի և պատրագութեան ժամանակի ու ծի-
սական ուրիշ խնդիրներու մասին ուշագրութիւնն հրաւիրեց
վէհ. Հայրապետին Հարկաւ օրացոյցին մէջ սպազած աւելորդ
յիշատակութիւններն յստակելու խնդիրն ալ խորհրդակցու-
թեան առարկայ պիտի ըլլայ և եկեղեցւոյ մէջ օտարամուտ
խորթութիւններ միանգամ ընդ միշտ մէկ կողմ պիտի գրուին:
Կրօնական ժողովն ընդունեց Գնէլ Ճ. վարդապէտ այս առաջարկն
և որոշեց համագումար ժողովն հրաւիրելով այսպիսի խնդիք-
ներու համար խորհրդակցիւ, վիճաբանիւ, և արդիւնքն հաղոր-
դել վէհ. Հայրապետին:

ՀԱՅ ԿՈԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Մշակը (№ 150) հազորդում է, որ Կ. Պօլսոյ Հայոց
պատրիարք Տ. Եղիշէ Արքեքեպիսկոպոսը հետն ունենալով
կրօնական և քաղաքական ժողովների անդամներից ոմանց
յունիսի 29-ին շնորհաւորութեան այցելութիւն է տուել
Հայ կաթողիկների պատրիարք Թերզեանին:

Սիրալիիր ընդունելութեան ժամանակ խօսակցութեան
նիւթն եղել է կրօնապէս վտարանջած ազգի մէջ միասիրտ
գործակցութիւն թէ հոգեորականների և թէ աշխարհա-
կանների կողմից ազգի ընդհանրութեան օդտին:

Թերզեան Արքազանը ասել է.

«Զենք կրնար ըսել, թէ մեր գործը աւարտած է. մեր
միջի սէրը և միութիւնը աւելի պիտի գիւրացնեն մեր

գործերը. մեր ցաւերը աւելի պիտի թեթևնան և մեր սիրտերը բարախն միևնոյն զգացումներով։ Մենք եղբայրական համագործակցող ուժի պէտք ունինք։ Արդ, մեր խնդակցութիւնը և ներքին գոհունակութիւնը կը յայտնենք ձեր պատրիարք ընտրուելուն առթիւ։

Եսկ մեր որբազան պատրիարքը իւր միտքը ամփոփել է հետեւեալ կերպով։

«Մէկդի գնելով կրօնը, մենք ազգովին կրնանք միանալ կրթական հիմերու վերայ, կըքաւէ մեզի»։

Սրբազան թերզեանի խօսքերը նշանակալից են նրանով, որ արտասանուած են պատշաճ զգուշաորութեամբ։

Հայ-Հռոմէականաց Կ. Պատրիարքի

ի կայսերական պալատ։

8. Թէրզեան Սրբազան, երէկ, յունիսի 8-ին իր անդրանիկ այցելութիւնը տուաւ Կայս. պալատ և գահին անդամներուն, խօսեցաւ Կիլիկիոյ աղէտին վրայ, կարօտութիւնները պարզեց, Մուշի տագնապալալիք կացութեան վրայ կառավարութեան լուրջ ուշագրութիւնն հրաւիրեց, խօսեցաւ հասարակութեան պէտքերուն վրայ, կրոսվի և ալզու գործունէութեան մը ոկիզբը տալով։ Իրեն կընկերանային Գոյունեան և Արքիարեան Գերապայծառները, Խոկէնտէրեան վարդուր, Գրիգոր Առաքեան, Անտօն Ազնաւորեան Էֆներն և պալատական հիւրամեծար Թալէտ պէյ։

Պատրիարքարանի փողոցին մէջ խուան ըազմութիւն հաւաքուած էր, որ Ճափահարութիւններով ողջունեց զի՞նք։ Պալատան մէջ ընդունուեցաւ Ա. քարտուղարին և Ա. սենեկապետին կողմէ և սպասման որահին մէջ պատուասիրութիւններ ընծայուելէ վրեջ, Կալիպ վաշայի կողմէ առաջնորդուեցաւ Կայսեր մօտ, իր հետեւորգ եկեղեցական գասուն և վարչական ներկայացուցիչներուն հետ։ Գահոյից դահլիճին մէջ Կայսրն յունկայո ընդունեց զիքենք։ Տ. Թէրզեան Սրբազան գրաւոր ուղերձ մը կարգաց, ուր շնորհակալութիւն կյայտնէր, թէ երեսուն տարուան յոռի վարչութենէ մը յետոյ, Ասհմանագրական առաջին կայսեր ներկայանալու պատիւին կարժանանայ և Կայս. արևշատութեան համար բարեմաղթութիւնները բաւաւ։ Կայսրն հրաւիրեց, որ հիւրեսը նոտին, և անմիջապէս

խօսք առնելով Տ. Թէրզեան Սրբազնն, ըստ թէ երբ նորին Վեհափառութիւնը կայսր կհըռչակուէր, անդին Ատանայի մէջ ամէնք ոք արցունք կթափէր և այս արտասուբներն ուրախութեան արցունքի վոլոսուեցան, երբ տեսանք գթամիրա հայր մը ոք 0սմ. Հայութենիքին գահուն վրայ կբազմէր, ըստ։ Սուլթանը պատասխանեց. «Ատանայի աղեաը, ինչպէս բոլոր 0ոմանցիներուն, նոյնպէս ինձի ալ շատ ցաւ պատճառատժ է։ Եմացայ թէ դուք ալ Ատանայի առաջնորդն էք և այս գէպքին ատեն ներկայ եղած էք հոն։ Աղետէն եաբ շատ գիշերներ անքուն անցուցի, և շատ անգամներ արտասուեցի այնպէս չէ», Սուլթանը դարձաւ հիւրամեծար Կալիս փաշայի կողմը, որ գլուխ հաստատական նշան տուաւ։ Կայսրը շարունակեց. «Ես իմ հպատակներս անխտրաբար կսիրեմ, անոնց ունեցած մէկ վիշտը իմս ալ է. ես կուզեմ ոք ժողովուրդս երջանիկ ըլլոյ, հոգ չէ թէ ինձի գժբախտութիւններ պատահին»։ Թէրզեան Սրբազն կրկին շնորհակալութիւններ յայսնելով, հրաժեշտ առաւ և իր հետեւրդներով ուզզուեցաւ Բ. Գուռ։ Վարչապետն 0սմ. Խորհրդական գացած ըլլալով կբացակայէր, հետեւաբար Թէրզեան Սրբազն այցելեց եպարքուական խորհրդական Ատել պէյի և ըստաւ, թէ Մուշէն անցեալ օր հեռագիր ստացած է երկու Հայ-հոռմէտկաններու սպանութեան վրայ և այսօր ալ ընդարձակ նամակ մը առի, ըստաւ, որ յանցաւորներուն անպատիժ մնացած ըլլալը կյայտնէ։ Յետագիտական շարժում կայ և կվախցուի, որ Մուշէն ալ երկրորդ Ատանա մը դառնայ։ Ատել պէյ փութաց ընդմիջելով՝ «Աստուած չընէ», ըսելով։ Թէրզեան Սրբազն շարունակելով իր բոլորն՝ ըստ թէ պէտք է կառավարութիւնն արթուն գտնուեի և ամէն միջոց պէտք է գործագրէ շարինին առաջըն առնելու համար։ Յետոյ յանձնարարեց վարչապետին հաղորդել թէ Խորհրդարանին կողմէ քուէարկուած պատմարէն այրոցաւելու եկեղեցիներու և դպրոցներու շինութեան համար բան մը չէ վճարուած է և հէք աղետեալները թշուառ ու անպատապան կը հեծն։ Թէրզեան Սրբազն թէ պիտի պցցելէր դատական, ներքին և արտաքին գործոց նախարարներուն ալ, ըսյօ ամէնքն ալ կբացակայէին, ուստի տեսակցեցաւ կրօնից Տեսուշին հետ։

Յետոյ պատերազմական պաշտօնատունն երթալով այցելեց Մահմուտ Եէվքէթ Փաշայի, որ սիրալիս ընդունելութիւն մ' ըրաւ։ Նախարարն ըստ թէ քիչ առաջ մեկնած էր քովէն Ատանայի կուսակալը, և յանձնարած էր անոր պէտք եղածը։ Թէրզեան Սրբազն պատասխանեց, թէ ուրախ պիտի ըլլալը զինքն այնտեղ գտնելով, որովհետեւ ձէմալ պէյ թէ պատուա-

կան, եռանգումն երիտասարդ զինուորական մ' է, ըստց Առաջ նայի համար իր ծրագիրները դորձնական արդիւնք մը առաջ չեն դեռ ու կմնան տեսական վիճակի մէջ; Հակառակ Խոր հրդարանին կողմէ քուէարկուած ըլլալուն, տակաւին չյանձնուեցաւ Առանայի այրացաւեր եկեղեցիներուն և գպրոցներուն շինութեան յատկացուած գումարը, ըստու, և խնդրեց փութացնել զայն: Սրբազնն յետոյ զինուորագրութեան վրայ դարձնելով խօսքը, ըստու թէ երբ հայ զինուորներ բանակին մէջ կառնուին՝ ինչու հայ սպաներ ալ հասցնելու դիւրութիւն չի արուիր: Նախարարը պատասխանեց, թէ ներկայ գպրոցական շրջանէն ոկուալ Խոտափիյի շրջանաւարտները տարի մը մրայն սպաներու վարժարանն յաճախելով պիտի կրնան սպայի վկայական ստանալ: Թէրզեան Սրբազնն յետոյ իր հետեւորդնեսով հրաժեշտ առաւ պատերազմական նախարարէն և վերադարձաւ Ա. Պատրիարքարան:

Յունիս 13, կիրակի օր կատարուեցաւ Կաթողիկոսական օրհնութիւնը Պատրիարքանիստ Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան գեսպաններու, ծանօթ հայ և Հայ-Հոռոմէական բարձր անձնաւորութիւններու և բազմաթիւ ժողովրդեան: Այս առթիւ երեսն ելած շառ հեկան խնդիր մը աշխանի է յիշատակութեան: Հայ-Հոռոմէական եկեղեցականք սմանք, նաև կարգ մը աշխարհականք պնդեցին, թէ քանի որ իրենց բոլոր ծէսերը կը կատարուին Հայ, եկեղեցւոյ արարողութեամբ, պէտք է օծուի նաև Կաթողիկոսը, մինչդեռ ցարդ կատարուածը օրհնութեան կամ եպիսկոպոսաց կողմէ ձեռնադրութեան, և քողի ու գաւաղանի նուիրման արարողութիւնն է: Ուրիշներ պնդեցին, թէ Կաթողիկոսներու օծումը հայ եկեղեցւոյ մէջ մտած է վերջին ժամանակներ տղդին քաղաքական վիճակը վերնալէն ետքը, և մերթ տեղի ունեցած է և մերթ ալ չէ ունեցած. Օծման փափաքողները փաստական համար ձեռագիրներ սրբագրելու հետապնդեցան, և մասնաւորապէս Մխիթարեան համակրելի վարդապետը՝ Հ. Սահակ Տ. Մովսէսեան՝ Գուրեան Ամեն. Ա. Պատրիարքը հօր արտօնութեամբ Ղալաթիոյ մատենադարաւ-

նին ձեռագիրները աչքէ անցուց, և դժաւ 360 տարուան ձեռագիր մը, որ կաթօղիկոսական օծում չի յիշատակեր, այլ միայն օրհնութիւն և ձեռնադրութիւն։ Բայց կան ուրիշ ձեռագիրներ ալ, որոնք ունին օծման կարգը և որոնցմէ ընդօրինակուած են էջմիածնայ և Սոոյ մէջ տպեալ օծման կարգերը։ Եղբակացութիւնն այն եղաւ, որ այս անգամ ևս Հայ-Հոռոմէական կ. Պատրիարքներու համար գործադրուած սովորական արարողութիւնը տեղի ունենայ, մինչև որ օծման մասին յառաջիկային Սինոդով կարգադրութիւն մ' ըլլայ։

(Տաճար)

— 222 —

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

Պրաւոլաւ եկեղեցի.

«Վերը. ԵՇՏ.»—շաբաթաթերթը ասում է, որ իրաւանց նախարարութիւնը ամուսնալուծութեան գործագարութեան մասին նոր ծրագիր է կազմում, որով թէև ամուսնալուծութիւնը ըստ առաջնոյն մնում է հոգեորիշմանութեան իրաւանց տակ, բայց ամուսնալուծութեան առիթ եղող փաստերը քննելը և վճռելը յանձնում է աշխարհիկ դատաստանիւ։

«СЛОВО» լրագիրը հարցնում է՝ աշխարհիկ դատարանի վճիռը պարտաւորական պէտք լինի՞ հոգեոր դատարանի համար թէ ոչ,—այս հարցի համար որոշ ցուցում չկայ օրինագծի մէջ, այլ միայն ամուսնալուծական դատավարութեան մէջ ձգձգումն մեծանում է։

Հոկտեմբերեանները մի օրինագիծ են ներկայացրել Պետական Դումային, պրաւուղաւ ծուխի իրաւունքի մասին, որին Դումայի բոլոր կուսակցութիւններն էլ համակրութեամբ են վերաբերում, ուստի և յաջող լուծումն անկասկած է։